վանքեր, նրանցից շատերը ծառայում էին որպէս բորոտների եւ հաշմանդամների պատսպարաններ: Ժողովրդից հեռացրած այդ ախտաւոր հասարակութիւնը ապրում է առանձին վանքերի մէջ, ուր նրանց խնամք էին տանում: Բայց այդ մարդասիրական սովորութիւնը, ժամանակների հետ փոխուելով, ստացաւ բոլորովին ուրիշ նշանակութիւն, եւ ժողովրդի սնահաւատութիւնը տոեց նրան մի այլ կերպարանք: Բայց 15 դար առաջ, այսինքն Ներսէս մեծի օրերով, այսպիսի հիմնարկութիւնների նպատակը բոլորովին ուրիշ էր, բոլորովին մարդասիրական էր:

Տիրեց մթին գիշեր: Ուխտաւորներից ոչ ոք դեռ քնած չէ: Վանքի շուրջը ընդարձակ տարածութիւն պատած է վրաններով. նրանց առջեւից քարշ ընկած գոյնզգոյն լապտերները տալիս են այն ընդհանուր լուսաւորութեանը կախարդական բնաւորութիւն: Վրանների ամէն մէկի մէջ զետեղուած են ուխտաւոր գերդաստաններ, իսկ շատերը մնացել են բացօթեայ, իջեւանելով բաց երկնքի տակ: Այս խառնիճաղանջ ամբոխի մէջ կարելի էր գտնել ամէն երկրի հայեր, սկսեալ Փոքր Ասիայից մինչեւ Պարսկաստան, մինչեւ Արարատի գաւառները: Իսկ Հաղբակայ, Վանայ, Մուշի, Բաղէշի բնակիչների մեծ մասն այնտեղ էին:

Ես դուրս եկայ մեր վրանից տեսնելու, թէ սալմաստեցիներից ովքեր էին եկած: Մարօն ցանկութիւն յայտնեց ինձ հետ գալու: Մարգարիտը եւ Խաթունը չափազանց յոգնած էին, մնացին վրանում: Փոքրիկ Սալբին արդէն քնած էր: Երկար ես ման էի գալիս Մարօի հետ ուխտաւորների բանակի մէջ: Ամէն տեղ շարժողութիւն կար, խառնւում էին, ամբոխւում էին, ամէն տեղ լսելի էր լինում երգ, աղաղակ, ծիծաղ, անէծք, աղօթք, եւ երբեմն մանուկ շրթունքների ջերմ սիրախօսութիւններ...

Կարդալով վերջին ժամանակներում Յունաստանի պատմութեան մէջ օլիմպիական, դելֆեան Ապողոնի եւ սպանդարամէտական տօների մասին, միշտ ես յիշում էի իմ ուխտագնացութիւնը եւ սուրբ Տիրամօր վանքը: Ես յիշում էի նրա տօնախմբութիւնը, ուր սկսեալ խորին հեթանոսութիւնից, ժողովրդի հոգու մէջ մտած նախապաշարմունքները արտայայտւում էին իրանց բոլոր նախնական կերպարանքով: Ես երեւակայում էի իմ մտքում միշտ մի այսպիսի պատկեր՝ քրիստոնէութիւնը յայտնուած քուրմի զդեստով...

Ոչ մի նոր վարդապետութիւն բոլորովին չէ կարողանում ջնջել անհետացնել ժողովրդի սրտից այն, որ թողել է անցեալը: Հեթանոսութան ծէսերը, արարողութիւնները, պաշտամունքը դարերով արմատացել էին հայի հոգու մէջ, նրանք միացել էին նրա բնաւորութեան հետ: Քրիստոնէութիւնը միան-